ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

24-ը մայիսի 2024թ.

Շնորհավորական ուղերձ Վերջին զանգի կապակցությամբ

Աբովյան բազմաբնակավայր համայնքի սիրելի՛ շրջանավարտներ, ուսուցիչներ, ծնողներ.

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիդ Վերջին զանգի՝ սպասված ու հիշարժան տոնի կապակցությամբ: Դպրոցական կյանքի ավարտն ազդարարող Վերջին զանգը հրաժեշտ է մանկության անհոգ աշխարհին, միևնույն ժամանակ մեծ կյանք մտնելու, նոր հորիզոններ բացահայտելու մեկնարկ է: Այս ճամփաբաժանին հարկ եմ համարում ընդգծել դպրոցի հիմնարար ու անփոխարինելի դերը յուրաքանչյուր շրջանավարտի կյանքում:

Հարգարժա՛ն ուսուցիչներ.

Անգնահատելի է ձեր նվիրյալ աշխատանքը. տարիների ներդրած ջանքն ու եռանդը: Հուսով եմ՝ ձեր փոխանցած գիտելիքները, ճշմարիտ խորհուրդներն ու բարի հիշողությունները ուղենիշ կդառնան ավարտող աշակերտների հետագա վճռորոշ քայլերում:

Հարգելի՛ ծնողներ.

Պատանեկության էջը թերթող ձեր զավակներն այսօր մուտք են գործում փորձություններով, բայց և վերելքներով ու հաճելի ակնթարթներով լի երիտասարդություն, վստահ եմ ծնողական զգոնությամբ և ջերմությամբ կօգնեք նրանց հաղթահարել դժվարություններ ու գրավել բարձունքներ:

Աբովյան համայնքի սիրելի՛ շրջանավարտներ.

Մենք այսօր լավագույն ակնկալիքներով ենք ճանապարհում ձեզ կյանքի նոր ու կարևոր շրջափուլ և ցանկանում եմ, որ հաստատուն քայլերով, վստահ ու նպատակասլաց ընդառաջ գնաք ձեր երազանքներին:

Մեր հայրենիքի, մեր համայնքի վաղվա օրվա կերտողները դուք եք. ուստի ուժեղ պետություն և բարեկեցիկ կյանք ապահովելու համար ձգտեք լինել խոհեմ ու պիտանի քաղաքացիներ. նպատակադրվեք ստանալ լավ կրթություն, դառնալ որակյալ մասնագետներ բոլոր ոլորտներում:

Լավագույն բարեմաղթանքներով կրկին շնորհավորում եմ բոլորիդ:

Ձեզ բարի երթ և կանաչ ճանապարհ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ